# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք,
☎091 700 667
16.մայիսի. 2019թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու թիվ 20, 21, 22, 23, 24, 25, 26 որոշումները:

Առդիր՝ 7 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ 1նրբ 21
☎.091 700 667

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N20**

«10 » մայիսի 2019 թվականի

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ ՄԱՅԻՍԻ 10_Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2019թ մայիսի 10_ի արտահերթ նիստի օրակարգը:

1. Սարահարթ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի <<Սարահարթ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 36 -ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Սարահարթ համայնքի ավագանու 2017թ հունիսի 14-ի թիվ 14-Ա որոշումը անվավեր ճանաչելու մասին
3. Հանձնաժողով կազմելու մասին
4. Համայնքային սեփականության հողամասը աճուրդ վաճառքով օտարելու մասին
5. Սարահարթի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության, վարձակալության տրամադրման ենթակա հողը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին
6. Սարահարթ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Հալաջյան Արթուր | | | |
| Քոթանջյան Վազգեն | | | |
| Սահակյան Լյովա | | | |
| Քոթանջյան Էդգար | | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Բարիկյան Վահան | | | |

Համայնքի ղեկավար Արտյոմ Փիլոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարահարթ համայնք, հասցե զ Սարահարթ 10փ **1նրբ** 21

☎.091 700 667

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ** N21 -Ն

«10 »մայիսի 2019 թվականի

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի <<ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 36 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է.

1.Սարահարթ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի << Սարահարթ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 36 -Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Հալաջյան Արթուր | [signature] | | |
| Քոթանջյան Վազգեն | [signature] | | |
| Սահակյան Լյովա | [signature] | | |
| Քոթանջյան Էդգար | [signature] | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Բարիկյան Վահան | | | |

Համայնքի ղեկավար Արտյոմ Փիլոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ 1նրբ. 21
☎.091 700 667

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N22

«10 » մայիսի 2019 թվականի

### ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին

Որոշում է

Անվավեր ճանաչել Սարահարթ համայնքի ավագանու 2017թ հունիսի 14-ի թիվ 14-Ա որոշումը:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Հալաջյան Արթուր | [signature] | | |
| Քոթանջյան Վազգեն | [signature] | | |
| Սահակյան Լյովա | [signature] | | |
| Քոթանջյան Էդգար | [signature] | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Բարիկյան Վահան | | | |

Համայնքի ղեկավար [signature] Արտյոմ Փիլոյան

[stamp]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ 1նրբ 21
☎.091 700 667


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N23

«10 » մայիսի 2019 թվականի

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Սարահարթ համայնքի ավագանին

որոշում է.

1.Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Սուսան Կիրակոսյան հանձնաժողովի նախագահ,
2. Վազգեն Քոթանջյան ավագանու անդամ, հանձնաժողովի քարտուղար,
3.Արթուր Հալաջյան ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
4. Ռուդիկ Խումարյան դպրոցի տնօրեն, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
5.Հակոբ Կասեմյան համայնքի բնակիչ կամ հասարակական կազմակերպության կամ միավորումների ներկայացուցիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)։

2. Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 7–օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին։

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Հալաջյան Արթուր | [signature] | | |
| Քոթանջյան Վազգեն | [signature] | | |
| Սահակյան Լյովա | [signature] | | |
| Քոթանջյան Էդգար | [signature] | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Բարիկյան Վահան | | | |

Համայնքի ղեկավար Արտյոմ Փիլոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ. Սարահարթ 10փ 1-ն նրբ. 1 2

հեռ`.091 700 667
Էլ.փոստ `sarahart.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24

« 10 » մայիսի. 2019 թ.

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ‹‹Հողային օրենսգրքի›› 67-րդ հոդվածի 1-ին կետով, 76-րդ հոդվածի 3-րդ կետով, ‹‹Տեղական ինքնակառավարման մասին›› ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգով` հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Սարահարթ համայնքի սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողամասերը աճուրդ վաճառքով օտարելու մասին Սարահարթ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
ա/06-097-0127-0114 կադաստրային ծածկագրով, 0.02917 հա մակերեսով, 42000 /քառասուներկու հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով, լոտի մասնակցության վճարը սահմանել 1000 ՀՀ դրամ, քայլի չափը 5000 ՀՀ դրամ, նախավճարը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
2. Համայնքի ղեկավարին` ապահովել աճուրդ վաճառքով օտարվող հողամասի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

| Ավագանու անդամներ | կողմ | Դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Հալաջյան Արթուր | [signature] | | |
| Քոթանջյան Վազգեն | [signature] | | |
| Սահակյան Լյովա | [signature] | | |
| Քոթանջյան Էդգար | [signature] | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Բարիկյան Վահան | | | |

Համայնքի ղեկավար` [signature] Արտյոմ Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ 1նրբ 21
☎.091 700 667

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N25**

«10 » մայիսի 2019 թվականի

ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ , ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ և 57-րդ հոդվածներով, , ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով՝ հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը,

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն, Սարահարթ համայնքի սեփականություն հանդիսացող ներքոնշյալ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասը մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելուն՝
**06-097-0131-0088** կադաստրային ծածկագրով 0.02 հա մակերեսով 1 լոտով, մեկնարկային գինը սահմանել տարեկան 400 000 ՀՀ դրամ:
2. Վարձակալության տրամադրման ժամկետը մինչև 2 տարի: Մրցույթի մասնակցության վճարը 1000 դրամ, քայլի չափը 5000 դրամ, նախավճարը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
3. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել մրցույթի մասին հրապարակային ծանուցումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Հալաջյան Արթուր | [signature] | | |
| Քոթանջյան Վազգեն | [signature] | | |
| Սահակյան Լյովա | | [signature] | |
| Քոթանջյան Էդգար | [signature] | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Բարիկյան Վահան | | | |

Համայնքի ղեկավար Արտյոմ Փիլոյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


22 Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ 1նրբ 21
☎.091 700 667


### Ո Ր Ո Շ Ու Մ N26

«10 » մայիսի 2019 թվականի

### ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.07.2010 թվական թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով, հաշվի առնելով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված 26/02/2019թ. N ԱՏ-22/02/2019-37-0011 տեղեկանքը և համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, որ կադաստրային քարտեզի և տեղեկագրի համաձայն 06-097-0008-0004 ծածկագրով 0.07844 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը սխալմամբ համայնքային սեփականության փոխարեն հաշվառվել է անհայտ, և որևէ անձի նկատմամբ գույքային իրավունքի գրանցում չի իրականացված, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Ճանաչել Սարահարթ համայնքի սեփականության իրավունքը 06-097-0008-0004 ծածկագրով 0.07844 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ համաձայն հատակագծի:

2. Համայնքի ղեկավար Ա. Փիլոյանին՝ դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, 06-097-0008-0004 ծածկագրով 0.07844 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Սարահարթ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Հալաջյան Արթուր | [signature] | | |
| Քոթանջյան Վազգեն | [signature] | | |
| Սահակյան Լյովա | [signature] | | |
| Քոթանջյան Էդգար | [signature] | | |
| Բաբիկյան Հարություն | | | |
| Բաբիկյան Վահան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՓԻԼՈՅԱՆ